

ԱՐԱՄՈՒՍԻ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՎՈՐՆԵՐԷ

2. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Արամուսի հնագիտական արշավախումբը 1988 թ. սկսեց ՀՀ Կոտայքի շրջանի Արամուս գյուղի հարավ-արևմտյան ծայրամասում տեղադրված ուրարտական ամրոցի պեղումները¹:

Մինչ այդ ամրոցում մասնակի ուսումնասիրություն էր կատարվել հնագետ է. Վ. Խանզադյանի կողմից²: Հուշարձանը տեղադրված է բազալտե գանգավածեղ հզոր ժայռաբլուրներից կազմված թամբաձև տեղանքի վրա:

Ավելի քան 70 մ բարձրությամբ արևելք-արևմուտք ուղղվածությամբ բլրաշարի վրա վեր են խոյանում երբեմնի ահռելի ամրոցի ավերակները: Համալիրը բաղկացած է երկու խոշոր՝ արևելյան և արևմտյան հատվածներից: Արևելյան մասում կառուցվել են վերին և ստորին միջնաբերդերը: Վերին միջնաբերդը իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյուն՝ 20—30 մ լայնքով, արևելքից արևմուտք ձգվող առանցքով, շուրջ 6,5 հա տարածք ընդգրկող, բազմաթիվ կառույցներից և շինություններից կազմված ամրաշինական համակարգ: Վերջինս օղակված է մի քանի տասնյակի հասնող որմնահերժներից և աշտարակներից բաղկացած 2,1—5,5 մ հաստությամբ պարսպապատերով: Պարսպապատերից մինչև 1,05 մ առաջ եկող որմնահերժերը ունեն 3—5—8 մ երկարություն: Տեղանքի որոշ հատվածներում ժայռերը հարթեցված են: Պարսպապատերի ամրությունը ապահովելու համար տեղ-տեղ կառուցվել են մեկից մինչև երեք շարք աստիճանաձև հենապատեր: Վերին միջնաբերդի արևելյան և արևմտյան ճակատային պարսպապատերի մեջ բացվել են կողային աշտարակներով ամրացված մուտքեր:

Ստորին միջնաբերդը հանդիսանում է վերը նկարագրված համալիրի օրգանական շարունակությունը: Զբաղեցնելով 3 հա տարածություն՝ այն ուղղված է արևելքից արևմուտք՝ միաձուլվելով արևելյան հատվածում վերին միջնաբերդի արևմտյան մուտքին: Հատակագծում ձգված, ուղղանկյան տեսքի ստորին միջնաբերդը վերինից շուրջ 20 մ ցածր է տեղադրված: Քննարկվող համալիրը ունի 30 մ լայնություն և վերին միջնաբերդի պես շրջապատված է տեղանքի գծազրուծյալը համապատասխան պարսպապատերով: Կրկնելով վերին միջնաբերդի կառուցողական մանրամասները՝ այն արևմտյան պարսպապատի կենտրոնական հատվածում ունի հզոր մուտք, որի հյուսիսային և հարավային հատվածներում կառուցվել են խոշոր անկյունային աշտարակներ: Այս միջնաբերդը արևելյան ճակատամասով հաղորդակից է վերին միջնաբերդի արևմտյան մուտքի հետ:

Ամրոցի արևմտյան հատվածը համեմատաբար վատ է պահպանվել: Շուրջ

¹ Տե՛ս 2. Գ. Ավետիսյան, Արամուսի բխայնական ամրոցի պեղումները, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989, էջ 47—49:

² Տե՛ս է. Խանզադյան, էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 11:

15 հա տարածք ընդգրկող համալիրը շրջափակված է բազալտե հզոր պարբսպապատերով, որը համանաբար «բակի» դեր է խաղացել: Ամրոցի արևմտյան հատվածը ունի արևելք-արևմուտք ուղղվածություն և ստորին միջնաբերդից բաժանվում է 12 մ լայնությամբ հյուսիս-հարավ ձողովոջ ճանապարհով:

Շուրջ 250 հա ընդգրկող ամրոցի տարածքը տեղանքի գծագրությանը համապատասխան բաժանվում է դարավանդների, որոնք մասնավորապես միջնաբերդի հյուսիսային և հարավային թևերում իրարից հեռանում են 70—100 մ: Գարավանդները իրենց հերթին տեղ-տեղ ամրացված են մինչև 2,5 մ բարձրությամբ պահպանված պարսպապատերով, որմնահեծերով և աշտարակներով: Նման դարավանդները բնորոշ են ուրարտական մի շարք ամրոցների և բնակավայրերի՝ Հայկաբերդ, Կայալի Դերե, Արգիշտիխինիլի և այլն³:

Ինչպես ուրարտական խոշոր ամրոցները, այնպես էլ Արամուսը ունեցել է քաղաքային հատված, որը, սակայն, չի պահպանվել: Արամուսի բիայնական համալիրները շրջապատված են բազմաշարք հզոր պարսպապատերով: Վերջիններս ունեն կրկնակի զրահապատ բազալտե կոպտատաշ հսկայական քարաբեկորներից շոր շարվածք: Պատերի հաստությունը համապատասխանում է ուրարտականին՝ տատանվելով 2,1—5 մ միջև, պահպանված բարձրությունը՝ 2,5 մ: Պարսպապատերի համար որպես հիմք են հանդիսացել բազալտից ժայռերի հարթեցված ելուստները: Հին վարպետները պատերի ամրությունը առավել ապահով դարձնելու նպատակով դրանց հիմքի մասում ավելացրել են միաշարք-եռաշարք կից հենապատեր: Բացի այս հենապատերից, կառուցվել են նաև 3—8 մ երկարությամբ, 1—1,2 մ լայնքով որմնահեծեր, բազմաթիվ քառանկյուն, ուղղանկյուն հզոր կցակառույց աշտարակներ, որոնց մի մասը անկյունային է: Ամրոցի առանձին համալիրներ ու շինություններ միմյանց հաղորդակից են հարթ, աստիճանավոր թեքամուտքերով: Միջնաբերդերի առանձին հատվածներում, պարսպապատերի մեջ, որոշակիորեն ընդգծվում են նաև պաշտպանական նկատառումներով, «ծուղակի» սկզբունքով կառուցված մուտքեր, անցումներ, որոնք իրենց հատակագծային լուծումներով բնորոշ են Վանի թագավորության պաշտպանական համակարգին:

Արամուսի պաշտպանական համալիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ. թ. ա. 8—7-րդ դարերում ուրարտական ամրաշինությունը վերելք էր ապրում և հասել էր բարձր մակարդակի: Տարածքի ռացիոնալ օգտագործումը և բացառիկ ստանդարտ նախագծային լուծումները համապատասխանում են հին արևելյան հզոր պետությունների կառուցողական շափանիչներին: Արամուսի ֆորտիֆիկացիոն շինությունների մեջ շափազանց կարևոր նշանակություն ունեն ոչ միայն ուղղագիծ պարիսպները, աշտարակներն ու որմնահեծերը, այլև մուտքերն ու անցումները, որոնք Հայկական լեռնաշխարհում դեռևս վաղ բրոնզի դարում կիրկոպյան ամրոցներից ավանդաբար ժառանգած ամրաշինության տիպական հատկանիշներ են:

Արամուսի վերին միջնաբերդի արևմտյան հատվածում պեղվեցին միջնաբերդերը միացնող մուտքը և 7 կացարաններ: Միջնաբերդերը միացնող պեղված մուտքը պաշտպանական համակարգի կարևորագույն շինություններից է: Որպես հանգուցային օղակ, այն նախագծվել և կառուցվել է ռազմավարական նպատակներով: Քննարկվող մուտքը առանձնակի համություններով և խնամքով է կառուցվել՝ հաշվի առնելով առաջին հերթին տեղագրական, ապա նաև պաշտպանական սկզբունքները: Նշված միջնաբերդի արևմտյան մուտքը

³ Տե՛ս Զ. Գ. Ավետիսյան, Արագածի ամրաշինությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1996, № 1, էջ 41:

բացվում է նույն պատասպարատի կենտրոնական հատվածում, որի անմիջական հյուսիսային և հարավային կողմասերում կառուցվել են ոչ մեծ շափերի (4,4×3,4 մ) անկյունային, հատակագծում ուղղանկյուն, կոպտատաշ հսկայական բազալտից շոր շարվածքով աշտարակներ (պահպանված բարձրությունը՝ 2,5 մ): Աշտարակների միջև բացված մուտքի լայնքը կազմում է 3 մ, որը եռաշար սրբատաշ տուֆով պատված աստիճանավանդակով տանում է դեպի միջնաբերդի բնակելի համալիրները: Աստիճանները սև և կարմրավուն տուֆից լավ մշակված սալաքարեր են, որոնք ունեն 0,25—0,3 մ հաստություն, 0,7 մ լայնք, իսկ առանձին սալաքարերի երկարությունը հասնում է մինչև 1,2 մ:

Արամուսի ուրարտական ամրոցի թվագրման համար կարևոր նշանակություն ունի նրա հիմնադրման ժամանակագրության հետ կապված խնդիրը: Այս հարցի պատասխանը կոնկրետանում է, երբ հայտնաբերվում են պատմական գրավոր աղբյուրներ: Այդ առումով կարևորվում է Վանի թագավորության հզորագույն թագավորներից Մենուայի որդի Արգիշտի I (մ. թ. ա. 786—764) տարեգրության ուսումնասիրությունը:

Տասը տողից կազմված այս արձանագրությունը⁴, ունի հետևյալ բովանդակությունը.

- (1) Խալդի (աստվածն) արշավեց, իր զենքին
- (2) հպատակեցրեց էթիունի երկիրը:
- (3) Խալդին ուժեղ է, Խալդի զենքը ուժեղ է:
- (4) Խալդյան զորությունը արշավեց,
- (5) Արգիշտին, Մենուայի որդին,
- (6) նվաճեց Ուլուանիի երկիրը՝
- (7) Դարանի քաղաքի երկիրը: Խալդյան
- (8) մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին,
- (9) թագավոր (է) հզոր, թագավոր՝ մեծ, թագավոր՝ Բիայնիլիի,
- (10) տերը՝ Տուշպա քաղաքի:

Արամուսի ուրարտական ամրոցից ոչ շատ հեռու տեղադրված Դարանի ամրոցի դիմաց՝ նրա հարավային կողմում, ժամանակին փորված և Արգիշտի I կողմից թողնված այս արձանագրության ուսումնասիրությունից պարզվում է, որ Ուրարտուի հզորագույն արքան գրավել է Ուլուանի երկիրը Դարանի քաղաքով:

Ուրարտուի թագավորները, որպես կանոն, խոշոր երկրամասեր և քաղաքներ գրավելուց հետո կառուցում էին (եթե չէին վերակառուցում հինը) նոր քաղաքներ, ամրոցներ, միջնաբերդեր:

Ահա նման պատկեր է ուրվագծվում Արամուսի ուրարտական ամրոցի ուսումնասիրության ժամանակ: Այս ամենը և հնագիտական նյութի վերլուծականը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հետազոտվող ամրոցը կարելի է թվագրել մ. թ. ա. 8-րդ դարով:

Արամուսի ուրարտական պաշտպանական համակարգի առկայությունը, անշուշտ, պայմանավորվում է Վանի թագավորության ամրաշինության բուռն զարգացմամբ: Տեղանքի ուսցիտնալ օգտագործումը և օպտիմալ նախագծային լուծումները համապատասխանում են Բիայնիլիի շինարարական արվեստի շափանիշներին: Արամուսի պարիսպների հատակագծային կոնկրետ մըշակված ձևատիպաբանական հատկանիշները՝ ուղղագիծ պարսպի հաստությունը, միմյանց որոշակի հեռավորությամբ հաջորդող և պարսպից առաջ

⁴ Տե՛ս Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи. М., 1960, էջ 259: Տեքստը հայերեն է թարգմանել Ն. Վ. Հարությունյանը:

եկող որմնահեծերը, աշտարակները բնորոշ են ոչ միայն Արարատյան դաշտավայրին, այլև նախալեռնային և լեռնային շրջանների համալիրներին, ամբողջ Վանի թագավորությանը: Նման ոճը ավելի հարմար և բնորոշ է պետական բնույթ ունեցող տարածույթներին, երբ խոշոր շափերի կառույցները ապահովում են երկրի առաջընթացը իր գոյատևման ողջ ժամանակաշրջանում: Արամուռի բիսպանական միջնաբերդի պարիսպները նույնատիպ են էրբուռնիի և Արգիշտիխինիլիի միջնաբերդերի պարիսպների տարածական ձևերին:

Պեղումներից հայտնաբերված հնագիտական գտածոների հավաքածուն բաժանվում է մի քանի խմբի՝ խեցեղեն, մետաղից առարկաներ, քարից քանդակ, սյուն-կուռքեր, աշխատանքային գործիքներ, ոսկրե իրեր:

Խեցեղեն: Կազմում է ամենամեծ հավաքածուն, որի մեջ առանձնանում են տարբեր շափերի և ձևերի խեցանոթներ: Հայտնաբերված խեցեղենը իր կիրառական նշանակությամբ բաժանվում է երեք մեծ կատեգորիաների. 1. Երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման և պահպանման համար նախատեսված անոթներ: 2. Կենցաղային սպասք: 3. Հանդիսական-ծիսական խեցեղեն: Ըստ պատրաստման և հարդարման եղանակի, երեք կատեգորիաներում հանդիպող խեցեղենը բաժանվում է երկու խմբի. 1) կարմիր, սև, փայլեցրած, բարձրորակ, անգորսպատ, դուրգով պատրաստված, 2) կոպիտ, սև, փայլատ մակերեսով անոթներ:

Առաջին կատեգորիայի մեջ առանձնացված խեցեղենը բաժանվում է հետևյալ ձևաբանական տիպերի:

Կարասներ: Խոշոր և փոքր շափերի ձգված, ուռուցիկ իրանով, հարթ հատակով, լայնաբերան, ուղիղ կտրված շուրթով անոթներ են: Զարդամոտիվների համակարգը հիմնականում բաղկացած է ուղղանկյուն, եռանկյուն սուր գագաթներով վեր կամ ներքև ուղղված միաշարք-եռաշարք երկրաչափական պատկերներից, որոնց միջև, ինչպես նաև շուրթի տակ, հաճախ արվում են միաշարք, երկշարք ուռուցիկ, հարթ կամ բուրբանախշ հորիզոնական գոտիներ: Այս անոթների շուրթերի վրա հանդիպում են տարբեր ձևի՝ խազի կամ օղակների պատկերով խազագիծ կամ դաջազարդ նշանագրեր:

Չաներ: Մեծ քանակի, հիմնականում բեկորային այս խեցեղենն ունի սահուն, դեպի վեր լայնացող իրան, զանգվածեղ կլորացող դուրս ճկված կամ ուղիղ կտրված շուրթ, հարթ, նեղ հատակ:

Սաչ-տապալակներ: Տարբեր տրամաչափի այս կարճ խեցանոթները ունեն լայն, հարթ հատակներ, կլորացող, ուղիղ կողեր, սրացող շուրթեր:

Բացի նշվածից, հայտնաբերվել են նաև զարեջրի պատրաստման անոթների, ծխամանի բեկորներ, որոնց օգնությամբ ծծումբով ծխեցրել են խոշոր անոթները, ապահովելով դրանց ախտահանումը:

Կենցաղային սպասքը ներկայացված է երկու խոշոր խմբերով՝ հասարակ և խոհանոցային խեցեղեն:

Առաջին խմբի խեցանոթների մեջ առանձնանում են սափորները, քրեզանները, թասերը, ինչպես և ճրագները:

Սափորներ: Ոչ մեծ շափերի, կլորացող ձգված իրանով, կարճ կամ ձրգված վզով, նեղ բերանով, հարթ, օղակաձև նստուկավոր հատակներով անոթներ են: Քննարկվող սափորների մեջ մեծ տոկոս են կազմում միականթ (օյնախոյա) տիպի օրինակները: Միականթ սափորների մյուս տեսակը ունի կլորացող, դուրս ճկված, երբեմն հարթ շուրթի կառուցվածք, իսկ կտրվածքում կլոր կանթերը հարդարված են աստիճանավոր ակոս նախշով:

Քրեզաններ, թասեր: Բեկորային ձևով հանդիպող այս բազմաբանակ խեցանոթները բաժանվում են երեք տիպի՝ կլորացող, դեպի վեր լայնացող և

եզրագծված ցածր կողերով: Ունեն կլորացող դուրս ճկված հարթ կտրված շուրթեր՝ հարթ, ներճկված, օղակաձև նստուկով հատակներ: Որոշ օրինակների իրաններին արված են զուգահեռ գծեր, ալիքավոր, զիգզագ ներճկված նախշագոտիներ:

Նշված խեցեղենի հետ մեկտեղ գտնվել են ճրագների, ափսենների, սկուտեղների բեկորներ: Հանդիպում են նաև գլանի ձև ունեցող բաժակներ:

Երկրորդ խումբը հիմնականում բաղկացած է կեռնեներից: Դրանք ունեն կլորացող, գնդաձև, ձգված իրան, հարթ կամ դուրս ճկված շուրթ, տափակ հատակ: Այս անոթները մրապատ են, իսկ իրանի վերին մասը զարդարված է հորիզոնական՝ մեկից մինչև մի քանի շարք ուղիղ, զիգզագ, ալիքաձև, եղրնգանախշ, հասկանախշ դեկորի հորինվածքներով: Կճուճների որոշ օրինակներ ձեռածեփ են:

Հանդիսական-ծիսական սպասքի նմուշները հիմնականում իրենց ձևաբանությամբ նույնանում են վերը քննարկված խեցանոթների հետ՝ տարբերվելով համեմատաբար բարձր անզոբապատումով, խեցու բարձրորակությամբ: Այս խմբի անոթների մեջ աչքի են ընկնում փոքր շափեր ունեցող սափորները, գավաթները, փիալաները:

Քավաքներ: Սակավ հանդիպող այս խեցանոթները ունեն կլորացող, ձրգված իրան, գլանաձև, փողալայնուկ վիզ, կլոր շուրթ, հարթ հատակ: Որպես կանոն, գավաթները երկկանթ են: Կտրվածքում կլոր կանթերի վերին մասում արված են սեպաձև մեկ կամ երկու ելուստներ: Իրանը վզից անջատման ընդգծված հատվածում կա ներճկված, ուռուցիկ գոտի:

Փիալաները ներկայացված են երկու բեկորներով: Դրանք ունեն կլորացող կարճ եզրագծված, գդալանախշով հարդարված ուռուցիկ կողեր, հարթ շուրթ:

Քննարկվող խեցեղենի մեջ առանձին խումբ են կազմում նրբագեղ տարբեր ձևերի անոթները: Դրանք սովորաբար մինչև 0,1 մ բարձրությամբ թասեր, սափորներ և սրվակներ են, որոնք օգտագործվել են տարբեր օժանելիքներ, հեղուկներ պահելու համար: Այս անոթների շարքում առանձնանում է № 5 կացարանից հայտնաբերված սև գույնի, անզոբապատ սափորը: Այն ունի ուռուցիկ իրան, կարճ գլանաձև վիզ, կլորացող դուրս ճկված շուրթ, որից սկիզբ է առնում վիզը հարդարող, իրար հաջորդող թույլ փայլանախշով արված ուղղահայաց նախշազարդ:

Հանդիսական, տոնական սպասքի այս օրինակները զարդարել են բնակարանների սրբազան «անկյունները»⁵, ինչպես նաև տաճարների, սրբարանների հարթակները: Բացի նշվածից, այս խմբին պատկանող անոթները օգտագործվել են ծիսական արարողությունների ժամանակ՝ գինով (հեղուկով) հեղում կատարելով աստվածներին: Նման պատկերներ սովորաբար հանդիպում են ուրարտական գոտիների, բարձրաբանդակների, նվիրատվական թիթեղների, որմնանկարների վրա:

Քննարկվող խեցեղենը, թե կիրառական նշանակությամբ և թե տիպերի բազմազանությամբ, իր լայն զուգահեռները ունի ինչպես Արարատյան դաշտավայրի՝ Արգիշտիխիխիլի, էրեբունի, Կարմիր բլուր, Օշական, Արագած, այնպես էլ Արևմտյան Հայաստանի մի շարք հնավայրերում՝ Փոքր խնձոր (Կայալի դերե), Ճմլին (Ալթին թեփե), Վան, Հայկաբերդ (Չավուշ թեփե) և այլն⁶:

Մետադե իրե: Այս խմբի մեջ ընդգրկված բրոնզից և երկաթից առար-

⁵ Տե՛ս Ա. Ա. Мартиросян, Аргистихинили, Ереван, 1974, էջ 148:

⁶ Տե՛ս Գ. Գ. Аветисян, Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван, 1992, էջ 7:

կաները ներկայացված են զենքի, զարդի, աշխատանքային գործիքների տեսակներով:

Մետաղե գտածոներից հետաքրքիր է բարձրորակ բրոնզե թիթեղից պատրաստված գոտու բեկորը: Այն դրվագման եղանակով զարդարված է մեծ և փոքր ուղղահայաց խաչվող կլոր վարդյակներով, որոնք արևի խորհրդանշան են: Նման զարդամոտիվներով հարդարված գոտիներ գտնվել են Կարմիր բլուրից, Նոր-Արեշից, Մեծամորից, Երևանի բիայնական դամբարանից⁷:

Հաջորդ գտածոն բարձրարվեստ ոճավորված բրոնզից շիթղ է: Այն կազմված է կլորացող, կենտրոնում ուռուցիկ իրանից, որի գլխամասում քանդակված է ընդգծված աչքերով, լայն բացված բերանով, գծանախշ վզով վիշապի պատկեր: Գազանի երախից դուրս է գալիս ասեղը: Այս գլխազարդը պատրաստված է կաղապարով: Նմանօրինակ ոճական առանձնահատկությունով հարդարումը բնորոշ է ուրարտական կիրառական արվեստին, ինչը վկայում են Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից և Նոր-Արեշից գտնված օձագլուխ ապարանջաններն ու զարդերը:

Պեղումներից հայտնաբերվել են նաև երկաթից ոչ մեծ չափի երկու դանակներ, որոնցից մեկը սրածայր է, մյուսը մանգաղաձև շեղբով: Այս տիպի երկաթից դանակները լայն տարածում ունեն Հայաստանի և Անդրկովկասի մ. թ. ա. 9—7-րդ դդ. հնավայրերում:

Խնդրո առարկա երկաթից իրերի վերջին օրինակը ներկայացված է կենտրոնական ողով ուրարտական տիպի նետասլաքով, որն իր բազմաթիվ զուգահեռներն ունի էրեբունիում, Արգիշտիխինիլիում, Կարմիր բլուրում, Օշականում և այլ հուշարձաններում:

Քարե փանդակ: Քննարկվող խմբին պատկանող առարկաները բաժանվում են երկու տիպի: Առաջինին պատկանող գտածոները բազալտից և տուֆից երկու գլուխներ են, իսկ երկրորդը՝ սև, կարմիր տուֆից սյուն-կուռքեր: Սրբարանից (№ 5) հայտնաբերված բազալտե քանդակն ունի ուռուցիկ ձրգված քիթ, խազագծված աչքեր, լայն բերան, կարճ կզակ, որը արձանի դեմքին տալիս է ձվածիր տեսք: Արձանի ծոծրակին արված է ուռուցիկ ելուստ, իսկ ճակատը ավարտվում է գլխարկով: Երկրորդ արձանը կարմիր տուֆից է: Այն, ի տարբերություն առաջին օրինակի, ունի կլոր անցքերով արված աչքեր, փոքրիկ բերանի բացվածք, քիչ ձգված քիթ: Գլխի վերին մասը կոտորված է:

Ներկայացված արձաններն իրենց ոճական առանձնահատկություններով նմանվում են մ. թ. ա. 8—6-րդ դդ. Հայաստանի հնավայրերից հայտնաբերված գտածոներին:

Երկրորդ տիպին պատկանող սև և կարմիր տուֆից, կտրվածքում կլոր, խնամքով մշակված սյուն-կուռքերը ունեն 0,3—0,7 մ բարձրություն: Պաշտամունքային նշանակության նման կուռքերը առավելապես հայտնի են Օշականի բնակելի համալիրներից⁸:

Աշխատանքային գործիքներ: Պեղումներից հայտնաբերված այս հավաքածուի մեջ առանձնանում են աշխատանքային գործիքների մի քանի տիպեր: Առաջին տիպին պատկանող բազալտից կլոր և մակույկաձև աղորիքները ունեն ողորկ մակերես: Մյուս տիպին պատկանող գտածոները բազալտից մեծ և փոքր սանդեր, սանդկոթեր, տղորիքներ են: Բացի վերոհիշյալից, կացա-

⁷ Տե՛ս С. А. Есаиян, Л. Н. Бяйгов, С. Г. Амаякян, А. Г. Канесян. Бняйнская гробница в Ереване, Ереван, 1991, էջ 17—18:

⁸ Տե՛ս С. А. Есаиян, А. А. Калантарян, Ошакан I, Ереван, 1988, էջ 44:

րաններից գտնվել են ծակոտկեն բազալտից թասեր: Սրանց մեջ առանձնա-
նում են կլորացող շուրթով, փոքրիկ նստուկով թասի բեկորները:

Վանակատից գտածոների մեջ աչքի են ընկնում կտրվածքում սեղանա-
ձև, եռանկյունի ցլեփները և շեղբերը, որոնց մի մասն ունի ռետուշի հետքեր:

Ոսկրից պատրաստված գործիքները 6 սմ երկարությամբ ասեղի, հելու-
նի բեկորներ են: Պեղումներից հայտնաբերվել է նաև ոսկորից կոճակ:

Արամուսի ուրարտական միջնաբերդը կարևոր նշանակություն ունի Բիայ-
նական ամրոցների պաշտպանական համակարգում, քանի որ այն, բացի պա-
հակակետ լինելուց, Ուլուանի երկրի վարչա-տնտեսական կենտրոններից էր:
Այն ունի որոշակի ընդհանրություններ Արգիշտիխիլի, էրբուլուի, Թեյշե-
բաինի⁹ քաղաքների հետ: Բլրի գագաթից տեսանելի ազդանշանով կարելի էր
հաղորդակցվել մի շարք ամրոցների հետ, որոնք գտնվել են ռազմավարա-
կան բանուկ ճանապարհների վրա: Արամուսի ամրոցը յուրօրինակ դարբաս է
Սևանի ավազանի և Արարատյան դաշտավայրի միջև:

Г. Г. АВЕТИСЯН—Фортификационные комплексы Арамуса.—
В 1988—1990 гг. нами была частично раскопана цитадель крепости
Арамус, которая дала конкретное представление о мощных крепостях
урартской фортификационной системы. Фортификационные сооруже-
ния крепости как по принципам постройки, так и по хронологии иден-
тичны. Крепость, а также цитадель в плане вытянуто-прямоугольные.
Стены цитадели толщиной до 5 м расчленены чередующимися контор-
форсами. Кроме того, цитадель укреплена огромными башнями (не-
которые угловые), которые играли важную роль для безопасности.
Строительная техника фортификационных сооружений Арамуса явля-
ется типичной для всей биайнской архитектуры. Этот великолепный
памятник имеет аналогии с Эребуни, Аргиштихинили, Тейшебаини,
Ошаканом, Арагацем и датируется VIII—VII вв. до н. э.

⁹ См. Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, т. 22,